ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Փոխանցումներ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ ֆիզիկական անձանց MIR քարտերից ՌԴ բանկերի МИР քարտերին

Հրապարակվել է՝ 01.04.2026թ.

Ուղարկող	«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ ֆիզիկական անձանց MIR քարտերի քարտապան
Ստացող	ՌԴ բանկերի կողմից թողարկված МИР քարտերի քարտապան
Բանկ	«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ
Փոխանցման արժույթ	ՌԴ ռուբլի
Փոխանցման եղանակ	• Բանկի վճարային https://most.vtb.am առցանց հարթակ • VTB Online բջջային հավելված
Փոխանցման համար անհրաժեշտ տեղեկատվություն	• Ուղարկողի քարտի համար, քարտի վավերականության ժամկետ, CVV կոդ, • Ուղարկողի անունը և ազգանունը լատինատառ (հայրանունը չի լրացվում), • Ստացողի քարտի համար, • Ստացողի անունը և ազգանունը լատինատառ (հայրանունը չի լրացվում) • Փոխանցման գումար
Փոխանցման միջնորդավճար	0%
1 փոխանցման նվազագույն գումար	100 ՌԴ ռուբլի
1 փոխանցման առավելագույն գումար	399,000 ՀՀ դրամին համարժեք ՌԴ ռուբլի (կախված փոխարժեքից*)
Միևնույն քարտից փոխանցման օրական սահմանաչափ/քանակ	399,000 ՀՀ դրամին համարժեք ՌԴ ռուբլու (կախված փոխարժեքից*) 3 փոխանցում 24 ժամվա ընթացքում
Ծառայության ռեժիմ	24/7
Փոխանցման տևողություն	1 րոպե

* ՎՏԲ-Հայաստան Բանկի՝ անկանխիկ ռուբլու վաճառքի փոխարժեք

1. «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) վճարային https://most.vtb.am էջը Բանկի հաճախորդներին տալիս է հնարավորություն Բանկի կողմից թողարկված MIR քարտերից կատարել առցանց փոխանցումներ ՌԴ բանկերի կողմից թողարկված МИР քարտերին:
2. Հաճախորդը հավաստում է, որ մինչ փոխանցման կատարումը իր կողմից լրացված (Բանկին տրամադրված) բոլոր տվյալները ճշգրիտ են և հավաստի և տալիս է իր համաձայնությունը Հաճախորդի տվյալները ուղարկել Բանկ և այլ ֆինանսական կազմակերպություններին, որոնք մասնակցում են գործարքի մյուս կողմում:
3. Փոխանցում իրականացնելու համար Հաճախորդը մուտքագրում է հետևյալ տվյալները՝
- «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ կողմից թողարկված MIR քարտի համարը, քարտի վավերականության ժամկետը և CVV կոդը,
- Ուղարկողի անունը և ազգանունը լատինատառ (հայրանունը չի լրացվում),
- ՌԴ բանկերի կողմից թողարկված МИР քարտի համարը,
- Ստացողի անունը և ազգանունը լատինատառ (հայրանունը չի լրացվում),
- Փոխանցման գումարը ՌԴ ռուբլով:

Սույն ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխվել:
Մանրամասների համար կարող եք վանգահարել 87-87 հեռախոսահամարով:

4. Փոխանցման միջնորդավճարը վճարում է ուղարկողը և տեղեկանում է գործարքի պահին գործող միջնորդավճարի մասին մինչև փոխանցման կատարումը:
5. Փոխանցման նվազագույն գումար՝ 100 ՌԴ ռուբլի. 24 ժամվա ընթացքում միևնույն բանկային քարտից հնարավոր է կատարել ոչ ավելի, քան 3 փոխանցում 399,000 ՀՀ դրամին համարժեք ՌԴ ռուբլու չափով (կախված փոխարժեքից):
6. Հաճախորդի քարտից փոխանցման գումարը ելքագրվում է առաջնային ՌԴ ռուբլի արժույթով հաշվից, իսկ անբավարար միջոցների դեպքում այլ հաշիվներից՝ ըստ քարտի հաշիվների առաջնահերթության: Ընդ որում, գործարքի փոխարժեք է սահմանվում Բանկի անկանխիկ վաճառքի փոխարժեքը, որով գործարքի կատարման օրվա դրությամբ փոխանցման գումարը և միջնորդավճարի գումարը հավաստագրվում են Բանկի պրոցեսսինգային կենտրոնում: Գործարքը Բանկի ԱԲՀ/ հաճախորդի քարտի հաշվեկշռին արտացոլվում է հաջորդ Բանկային օրը՝ կիրառելով տվյալ օրվա դրությամբ Բանկի անկանխիկ փոխարժեքը:
7. Փոխանցման գործողությունը ավարտելուց հետո Հաճախորդը ստանում է գումարի փոխանցումը հավաստող անդորրագիր, որտեղ արտացոլվում են գումարի փոխանցման բոլոր վավերապայմանները:
8. Փոխանցման գործողությունը ավարտելուց հետո 1 րոպեի ընթացքում փոխանցումը հաշվեգրվում է ստացողի քարտին:
9. Փոխանցման տվյալները հաստատումից հետո հնարավոր չէ հետ վերադարձնել/անվավեր ճանաչել:
10. Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կողմից ստացողի քարտի համարի սխալ մուտքագրման արդյունքում այլ քարտապանի հաշվին գումարի հաշվերգրման համար:
11. Հաճախորդը պարտավորվում է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ և բավարար միջոցները սույն Պայմանների 3-րդ կետում նշված տվյալների/տեղեկությունների պատշաճ պահպանությունն ապահովելու և դրանց՝ երրորդ անձանց հասանելիությունը կանխարգելելու և բացառելու ուղղությամբ:
12. Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների արտահոսքի համար, եթե դա տեղի է ունեցել Հաճախորդի մեղքով կամ վերջինիս անփութության հետևանքով:
13. Բանկը պատասխանատվություն չի կրում Ձեր կողմից ոչ վավեր կամ բլոկավորված կամ այլ կերպ գործողության մեջ սահմանափակված քարտով կամ քարտային հաշվով կատարվող գործառնության կասեցման կամ մերժման համար: Խնդրում ենք մինչև գործառնության կատարումը հավաստիանալ, որ

- Ձեր քարտի գործողության ժամկետը չի լրացել,
- քարտային հաշվին առկա է անհրաժեշտ չափով գումար,
- քարտը թողարկող բանկի կողմից առկա չեն քարտին կամ քարտային հաշվին դրված որևէ արգելանք կամ սահմանափակում,
- քարտը ֆիզիկապես գտնվում է Ձեզ մոտ:

ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ԲԱՆԿԻ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՁԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ:

ԲԱՆԿԸ՝ «ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ և ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՊԱՏՇԱՃ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ, ԿԱՐՈՂ Է ՀԱՃԱԽՈՐԴԻՑ «ՃԱՆԱՉԻՐ ՔՈ ՀԱՃԱԽՈՐԴԻՆ» ("KNOW YOUR CUSTOMER") ՍԿՉԲՈՒՆՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՊԱՀԱՆՋԵԼ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԿԱՄ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵ ԲԱՆԱՎՈՐ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՐՑԵՐ ՏԱԼ ՀԱՃԱԽՈՐԴԻՆ (ՆՄԱՆ ՊԱՀԱՆՋԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ):

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՏԻ (FOREIGN ACCOUNT TAX COMPLIANCE ACT (FATCA)) ՀԻՄԱՆ ՎՐԱ ԱՄՆ-Ի ՀԵՏ ԿՆՔԱԾ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԲԱՆԿԸ ՁԵՐ՝ ԱՄՆ ՀԱՐԿԱՏՈՒ ՀԱՆԴԻՍԱՆԱԼՈՒ ՀԱՆԳԱՄԱՆՔԸ ՊԱՐՁԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿԱՐՈՂ Է ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ:

Ծառայության վերաբերյալ ամբողջական տվյալներին կարող եք ծանոթանալ www.vtb.am կայքում, ինչպես նաև կանգահարելով միասնական տեղեկատվական ծառայություն 87 87 հեռախոսահամարով:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ «ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ և ՁԵՋ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է https://www.fininfo.am/dramakan-poxancumner:

Սույն ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխվել:
Մանրամասների համար կարող եք կանգահարել 87-87 հեռախոսահամարով: